

խաղաղ շինճանկի մէջ կը գտնուին Յու-
նաց հետ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ Ա Մ Ա Ռ Օ Տ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

Ի

Գ. Ս. ԽԱՊԱՅԵԱՆԷ

ՅԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՈՒԽՏԷ Ս. ՅԱԿՈՎԲԵԱՆՑ

Կը վաճառուի յերուսաղէմ՝ և ՚ի
Պօլիս ՚ի Փոխանորդարան .

Գին 7 Դահէկան :

Սոյն հրատարակութեան վերայ փոք-
րիկ ծանօթութիւն մի տալու համար
արժան կը համարիմք Գոսազբքին հե-
տեւեալ ԱԶԴԸ հրատարակել :

“Ներկայ Համառօտ Աշխարհագր-
ութիւնը պատրաստեցինք նորավար-
ժից համար ուղեցոյց ունենալով մեզ
ըստ քաղաքական նոր փոփոխմանց և
աշխարհագրական նորագոյն գիտելեաց
ի վերջին ժամանակս հրատարակուած
Գաղղիարէն ընտիր Գոսազբքերն :

Գոսաւորութեան մասին պատշաճ
գատեցինք ընդհանրապէս նոր ընդու-
նուած եղանակին հետեւիլ, նախ Բը-
նական մասն գնելով, տպա Քաղաքա-
կանն և ՚ի վերջոյ Ուսումնականն :

Սոյն գոսաւորութեան գլխաւոր
օգուտն այն է, որ երկրագնտիս բնա-
կան նկարագիրը աշխարհագրական
ուսման սէր և հետաքրքրութիւն կը
զարթուցանէ նորավարժից մէջ, գլխա-
ւոր լերանց շղթայից ուղղութիւնը ա-
ւելի զուարճութիւն կը տայ, քան Քա-
ղաքական մասի տէրութեանց և քա-

ղաքաց ցամաք անուաններն . մարդկային
ցեղի այլ և այլ բաժանմանց, նոցա
քաղաքակրթութեան տատիճանին եւ
աշխատութեանց ուսումն աւելի զը-
ւարձելի է . վերջապէս երկրագնտիս
այլ և այլ մասանց պողաբերութեան
եւ զանազան կենդանեաց համառօտ
նկարագիրն աւելի մանկական հաստ-
կին յարմար է : Բաց յաստի, նկատե-
լով որ շատ անգամ ցամաք անուա-
նացուցութիւնը տաղտկութիւն կը
պատճառէ ուսանողներուն և եռանդը
կը մարէ, շատ համառօտ անոյանք Քա-
ղաքական մասն միայն գլխաւոր քա-
ղաքներն գնելով . աշխարհներն կամ
տէրութիւններն եւս բնական բաժան-
մանց, կամ առաջնաց համեմատ դա-
տաւորեցինք դիւրմբունելի առնելու
համար : Ուսումնական մասին մէջ եւս
նախընթաց երկու մասանց համառօ-
տութիւնը պահպանեցինք : Իսկ ամե-
նէն վերջը աւելցուցինք Հայաստանի
աշխարհագրութիւնը, զոր մեր մա-
նուկներն աւելի ընդարձակօրէն ուսու-
նիլ պարտաւոր են ՚ի կանուխ ժամա-
նակաց և կատարելապէս տեղեկանալ
իրենց հայրենեաց :

Բաւ համարելով սոյն փոքրիկ ծա-
նօթութիւնը գոսազբքին վերայ, կը
յաւելումք, որ Ս. Ա. Թոռոյս Տն. Ժո-
ղովց կողմէն Ուսումնական Խորհրդոյ
քննութեան յանձնուելով՝ հաւանու-
թիւն գտած է տպագրութեան, ո-
րով կը յուսամք թէ՛ նոյն հաւանու-
թիւնն պիտի գտնէ Ազգային վարժա-
րանաց մէջ իւր կիրառութեամբն, որ
մեր աշխատանաց միակ եւ ամենէն
մեծ վարձն կը համարիմք :